այդ ժամանակ ռուսական բանակը, որ հաղթականորեն մտել է թշնամական երկրի խորքը և դարձել գրության տերը, սկսում է նահանջել ոչ միայն ռազմադաշտից, այլև լքել նույնիսկ Կովկասը:

Հավատա՞նք արդյոք, որ ռուսներն այդքան հեշտ կարող են թողնել իրենց հաղթանակների դաշտը և Կովկասը:

Հավատա՞նք արդյոք, որ ռուսները միայն ցարերի կամքով էին Կովկաս գալիս, և այժմ, երբ այդ կամքը չկա, վերադառնում են տուն:

Մի՞թե Ռուսաստանը սոսկ չափազանց ձգված ռետինե զանգված էր, որ ազատ մնալով հիմա կծկվում է ետ, թե՞ ռուս ժողովրդի այդ պատմական ծավալումն ուներ իր ներքին, ժողովրդի մեծ ոգով պայմանավորված իմաստը:

Կովկասի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նվաճման ժամանակ ռուս լավագույն մարդիկ այն միտքն էին հայտնում, թե Ռուսաստանը կոչված է այդ երկրներում ստեղծել քաղաքացիական ազատ կյանք, արդար իրավակարգ և լինել կուլտուրայի և լուսավորության կրողը:

Ի՞նչ եք կարծում, այդ բոլորը միայն դատարկ ֆրազնե՞ր էին, և մենք, որ մինչև այժմ հավատում էինք, սխալվե՞լ ենք:

Ռուսաստանն ավելի քան մեկ հարյուրամյակի ընթացքում միլիարդներով փող է գործադրել և անհամար հերոսական պատերազմներում միլիոնավոր կյանքեր զոհաբերել և ստեղծել լայնարձակ մի տերություն, որ այժմ դարձել է ռուսական մեծ հանրապետություն:

Ի՞նչ եք կարծում, ոչ մի կապ չկա՞ այն միլիոնավոր ռուս մարդկանց և այժմյան ռուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ռուս մարդիկ, որ դեռևս կանգնած են նախորդների եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգությունից, Արևելքում իրենց գրված գիրքից և իրենց ազգային մեծ առաքելությունից:

Մի՞թե այդ երրորդ Հռոմի անկումը ցավով չի արձագանքվում նրա զավակների սրտերում և մեծ հայրենիքը պաշտպանություն չի գտնի իր բազմահազար գնդերի կողմից. մի՞թե չի ստեղծվի նոր հզոր շարժում Ռուսաստանի վեհության, ազատության ու պատվի պաշտպանության համար:

1918, հունվար

ՀԱՆԳՅՐԵՔ ՀՐԴԵՀԸ

Պատերազմն ինքնին մի վայրենի և բարբարոս երևույթ է: Բայց եթե դա համարենք վիճելի, մեր՝ հայերիս և թաթարներիս վերաբերմամբ կան անվիճելի ապացույցներ և՛ մեր վայրենության, և՛ մեր բարբարոսության մասին, երբ որ խաղաղ ժողովուրդները ծառանում են իրար դեմ և կողոպտում ու մորթոտում

միմյանց ամենաանխնա կերպով: Դա հայ-թաթարական ընդհարումն է: Եվ այդ երևույթն ավելի սարսափելի է դառնում, երբ տեսնում ես, թե որպիսի անտարբերությամբ է նայում այդ ամենին երկու ժողովուրդների ինտելիգենցիան, որը շատ դեպքերում ինքն է առաջ բերում ընդհարում և ինքն էլ մասնակցում նրան:

Կար ժամանակ, երբ ես կարծում էի, թե մենակ թաթարներն են ընդունակ այդպիսի գազանության: Բայց, ավա՜ղ, ժամանակներն ու անցքերը ապացուցեցին, որ մենք այդ բանում իրարից ետ չենք մնում և, բացի այդ, նույնիսկ աշխատում ենք միմյանց գերազանցել:

Եվ ահա նույնիսկ այս պահին, երբ ամեն կողմից մեր երկրի վրա են գալիս դինված ուժերը՝ արևելքից Անգլիան, արևմուտքից Գերմանիան, հյուսիսից բոլշևիկները, հարավից թուրքերը և նրանց առաջապահ շահսևանները, քյուրդերը, չետնիկները և ազդավների ամեն տեսակ երամները, մեր «ազատ» և «հանրապետական» խաղաղ ժողովուրդները՝ հայերը և թաթարները, վեր են կացել, որպեսզի կողոպտեն և ոչնչացնեն միմյանց:

Այն ժամանակ, երբ մի կողմից մութ ուժերը տենդային եռանդով աշխատում են ավելի ու ավելի պառակտում մտցնել այդ ժողովուրդների մեջ, մյուս կողմից տեսնում ես, թե որքան քիչ են մարդիկ, որ վրդովվեին այդ հրեշային, կործանարար և խայտառակ երևույթից և պայքարեին նրա դեմ:

Մի բոպե մտածում ես, իսկ ու՞ր են այն անթիվ մարդիկ, որոնք դեռ երեկ խոսում էին հանուն ժողովրդի:

Ուզում ես ճչալ. ու՞ր եք դուք, ժողովրդի բարեկամներ, սոցիալիստներ և ոչ սոցիալիստներ ամեն տեսակի և կուսակցության, մի՞թե չեք տեսնում այս հրդեհը, որ լափում է ժողովրդին, մի՞թե չգիտեք, որ ժողովրդին ամենից առաջ պետք է իր կյանքը, չգիտե՞ք, որ նրան կրակից փրկելը առավել բարձր և ազնիվ գործ է, քան հեղափոխությունն ու հանրապետությունը:

Եկեք ուրեմն միասին հանգցնենք հետզհետե ծավալվող հրդեհը:

Հրձիգներին համարենք Կովկասի բոլոր ժողովուրդների և ամենից առաջ ազատության թշնամիներ և սերտ միաբան կռվի ելնենք նրանց դեմ:

Կատարենք մարդասիրության և ինքնապաշտպանության սրբազան գործը:

Երևակայեցեք, որ մեր մերձավորները, մեր կանայք և երեխաները վառվում են կրակի մեջ, և չդանդաղենք: Հիշենք, որ եթե չչտապենք, այն ժամանակ և՛ մեր մերձավորները, և՛ մենք կզոհվենք այդ հրեշավոր հրդեհին և այն ժամանակ կանիծենք և՛ հեղափոխությունը, և՛ ազատությունը:

1918